

լուսաւորեալ փոխանորդաց եւ աթոռակալաց նորին ի հնազանդեալ յերիցանց եւ ի ժողովրդեանս Թէքֆուրտաղոյ: Եւ զկնի իլձ առմանս արտասուածոր գիժօք գոգեսցի եթէ Սուրբ զլուխ քո ողջ լիցի վասն լուսաւորեալ հոգւոյն երջանկի եւ կեանք եւ արեւ նորա յերկար ամօք քեզ պարզեւեալ ի նախախնամողէն խնդրեսցի: Տինա՛ եւ բազմավայելուչ շնորհաւորութեամբ բարձրագագաթ եւ տիեզերատարած ըստ անուանդ հռչակի անբասիր կենօք ընդ արդեանց շահաւետեալ ի պարծանս Արամեան ազգի, ի փառս Հօրն երկնաւորի, ըստ ասից նորուն փառակցի թէ Տեսեալ զգործս ձեր բարիս Աստուածն համայնից փառաւորեսցի: Եւ սոյն պատճառաւ ի խնամս սրբազնութեանդ վստահանալի, զի ուսուցիչն քո եւ բարերարն մեր վաղեմի, բազմեբախտն քո եւ հայրն մեր պանծալի¹⁾, վարդապետն քո եւ հայր՝ եւ Հոգեւորտէրն մեր լուսաւոր հոգի ի գալուստ Գրիգորիս վարդապետի նորուն ճրագի առ յընդունել զպարզեւս օրհնութեանն ձրի, որոյ հայրն եւ պապն եւ պապուց պապքն ի նախնեաց իւրոց սուրբ տանդ եւ հոգեւոր տեարց անմիջոց սիրելի, որք եւ բազմաց սարասիւ եւ մեզ եւս բարեկամք եւ համշիրակք եւ դրացիք բառացի: Յորոց շառաւիղեալ սա Գրիգորիս բարունին յար եւ նման նախնեացն եւ հօր որդին՝ առեալ յետին թուշակին զօրհնութիւն վասն իւր եւ վասն մեր զնամակս Հոգեւորտիրին՝ առթիւ եւ բարերարութեամբ քոյին, եւ եկեալ ենաս առ մեզ ի պահոց սրբոյ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնախմբութեան Փրկչին, եւ յընթեռնուլն զնամակսն օրհնութեանն վերջին՝ ի վերայ մեր սփռեալ տարածէր թարգմանօրէն ըստ ուձին: Ապա թէ ի ճանապարհի լուայ զվախճան Հո-

1) պարջալի.